ՍՍՀՄ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ԳՐԻԳՈՐ ԱՅՎԱԶՅԱՆ

Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմավորումը Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակի, բոլշևիկների կուսակցության բազմակողմանի գործունեության արգասիքն է, Վլադիմիր Իլյիչ Լենինի գաղափարների, նրա մշակած ազգային քաղաքականության սկզբունքների կենդանի մարմնացումը։ «Մենք,— 1919 թ. գրել է Վ. Ի. Լենինը,— ազգերի կամավոր միություն ենք ուզում, այնպիսի միություն, որը ոչ մի բռնություն չթույլատրեր մի ազգի կողմից մյուսի վրա, այնպիսի միություն, որը հիմնված լիներ ամենալրիվ վստահության վրա, եղբայրական միասնության պարզ գիտակցության վրա, լիովին կամավոր համաձայնության վրա»[1]։

Այդպիսի միություն ստեղծվեց 60 տարի առաջ՝ 1922 թ. դեկտեմբերի 30-ին։

Ազգային հանրապետությունների միավորումը միասնական միության մեջ, բարենպաստ պայմաններ ստեղծեց մեր երկրի աննախընթաց զարգացման համար, հնարավորություն տվեց միավորել տարբեր ժողովուրդների ջանքերն ու ռեսուրսները, դրանք օգտագործել ավելի արդյունավետ, հաջողությամբ լուծել սոցիալիստական շինարարության բարդ խնդիրները։ Համագործակցությունն անհրաժեշտ էր մանավանդ այն ազգերի համար, որոնք ետ էին մնացել իրենց տնտեսական, քաղաքական և կուլտուրական զարգացմամբ։ Արդյունաբերական տեսակետից զարգացած շրջանների և, ամենից առաջ, Սովետական Ռուսաստանի աշխատավորները համակողմանի օգնություն ցույց տվեցին նախկինում տնտեսապես հետամնաց ժողովուրդներին։ Մեկ սերնդի կյանքի տևողության ընթացքում մեր երկրի մի շարք հանրապետություններ կիսագաղութային ծայրամասերից վեր են ածվել սոցիալիստական ինդուստրիալ-ագրարային շրջանների, շրջանցելով կապիտալիզմը։ Սոցիալիստական ինդուստրացման պրոցեսում միութենական բոլոր հանրապետություններում առաջացան արդյունաբերական օջախներ, ստեղծվեցին բանվոր դասակարգի և մտավորականության տեղական կադրեր։ Եթե խոշոր արդյունաբերության համախառն արտադրանքը 1928—1940 թթ. Ուկրաինական ՍՍՀ-ում աճել է 10 անգամ, Ռուսաստանյան Ֆեդերացիայում՝ 12, ապա Ղազախստանում՝ 20, Վրաստանում՝ 27, Կիրգիզիայում՝ 153, Տաջիկստանում՝ 324 անգամ[2]։ Հարկ է նշել, որ ազգային հանրապետությունների արագ զարգացման գիծը պահպանվում է նաև այժմ։ Այսպես, օրինակ, 10-րդ հնգամյակում արդյունաբերական արտադրանքի ծավալն Ադրբեջանում ավելացել է 47, Հայաստանում՝ 46, Բելոռուսիայում՝ 42, Մոլդավիայում՝ 32, Տաջիկրստանում՝ 29, Ուզբեկստանում՝ 27, Էստոնիայում՝ 24%-ով[3]։ «Մենք,— ընդգծված է «ՍՍՀՄ կազմավորման 60-րդ տարեդարձի մասին» ՍՄԿԿ Կենտկոմի որոշման մեջ,— իրավունք ունենք հպարտանալու, որ երկրի բոլոր ազգերի աշխատավորների հետ ընդհանուր շարքում նախկին ազգային ծայրամասերի ժողովուրդները, որոնք առաջներում դատապարտված էին դարավոր հետա-

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 30, էջ 368։

2 «Вопросы истории КПСС», 1982, № 1, с. 8.

3 «Правда», 7. VIII. 1981.

մնացության, վստահորեն քայլեցին դեպի սոցիալիստական գալիքը, չանցնելով կապիտալիզմի փուլը և հասան սոցիալիստական առաջադիմության բարձունքներին»[4]։ Անցած 60 տարիները նշանավորվեցին Սովետական Միության սոցիալ-տնտեսական շեշտակի զարգացմամբ։ Բազմապատիկ աճեց ազգային եկամուտը։ Համաշխարհային արդյունաբերական արտադրության մեջ ՍՍՀՄ-ի բաժինը 1922 թ. 1%-ից բարձրացավ ու հասավ 20%-ի[5]։

ՍՄԿԿ Կենտկոմի որոշման մեջ նշվում է, որ ՍՍՀՄ-ի կազմավորումը և հաջող զարգացումը միջազգային անանց նշանակություն ունի, պատմական կարևոր բնագիծ է նշանավորում ժողովուրդների իրավահավասարության և բարեկամության, աշխարհի հեղափոխական նորացման համար առաջադեմ մարդկության դարավոր պայքարում։

ՍՍՀՄ կազմավորումն ամենից առաջ հնարավորություն ստեղծեց լուծելու ազգային հարցը։ Լուծելով այդ հարցը, մեր երկիրն առաջադեմ մարդկությանը ցույց տվեց ազգերի և ժողովուրդների անիրավահավասարության վերացման ուղին։ Վ. Ի. Լենինը ՍՍՀՄ կազմավորման առթիվ գրած «Ազգությունների և «ավտոնոմիզացիայի» հարցի շուրջը» հոդվածում մատնանշել է, որ ազգային հարցի լուծումն էական նշանակություն կունենա «ոչ միայն մեզ համար, այլև ամբողջ ինտերնացիոնալի համար, Ասիայի ժողովուրդների հարյուրավոր միլիոնների համար, Ասիայի, որին վիճակված է մոտակա ապագայում, մեզանից հետո, հանդես գալ պատմական նախաբեմում»[6]։

ՍՍՀՄ կազմավորումը մեծացրեց մեր հնարավորությունները՝ օգնելու համաշխարհային հեղափոխական պրոցեսի բոլոր ջոկատներին։ Իր գոյության առաջին տարիներից ՍՍՀՄ-ը պաշտպանում էր ժողովուրդների ազատագրական պայքարը։ Օրինակ, նա իր համերաշխությունը հայտնեց ֆեոդալական ռեակցիայի և նրա արտասահմանյան հովանավորողների դեմ պայքարող չին ժողովրդին, նյութական և դիվանագիտական օգնություն ցույց տվեց Թուրքիայի, Իրանի և Աֆղանստանի ժողովուրդների հակաիմպերիալիստական պայքարին։

ՍՍՀՄ կազմավորումը մեծագույն աջակցություն էր միջազգային պրոլետարիատին։ Ահա բազմաթիվ օրինակներից մեկը. երբ 1926 թ. գործադուլի ելան անգլիացի լեռնագործ բանվորները, Սովետական Միության աշխատավորները հանգանակության միջոցով գործադուլավորներին ուղարկեցին 11,5 մլն ռ., որ կազմում էր անգլիական բանվորներին մյուս երկրներից ուղարկված գումարի 61%-ը[7]։ Երբ 1936 թ. Գերմանիան և Իտալիան ինտերվենցիա սկսեցին հանրապետական Իսպանիայի դեմ՝ օգնելու ֆաշիստական գեներալ Ֆրանկոյին, Սովետական Միությունը պաշտպանեց իսպանական ժողովրդի արդարացի պայքարը և Իսպանիա ուղարկեց մեծ քանակությամբ պարեն, հագուստ, դեղորայք։ Հանրապետական Իսպանիան Սովետական Միությունից ստացավ նաև որոշ քանակությամբ տանկեր ու ինքնաթիռներ։ Իսպանացի հազարավոր երեխաներ ապաստան գտան Սովետական Միությունում։ Մեր երկրից Իսպանիա մեկնեցին կամավորներ, այդ թվում նաև ռազմական մասնագետներ՝ օգնելու հանրապետական կառավարությանը՝ կազմակերպելու պայքարը ինտերվենցիայի և ֆաշիստական խռովության դեմ։ Դոլորես Իբարուրին հետագայում նշել է, որ այդ տարիներին Իսպանիայի աշխատավորները սեփական փորձով համոզվեցին, թե գործնականում ինչ է պրոլետարական ինտերնացիոնալիզմը, «հասկացան, թե բանվոր դասակարգի և բոլոր ժողովուրդների ազատագրական պայքարի համար ինչպիսի նշանակություն ունի Սովետական Միության գոյությունը...»[8]։

---

4 «Սովետական Հայաստան», 21. II. 1982։

5 Նույն տեղում։

6 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 36, էջ 706։

7 «История КПСС в шести томах», т. 4, кн. первая, М., 1970, с. 435.

8 Долорес Ибаррури, Октябрьская социалистическая революция и испанский рабочий класс, М., 1957, с. 29.

Առաջադեմ մարդկությանը Սովետական Միությունը անգնահատելի ծառայություն մատուցեց նաև երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին։ Սովետական Միության նախաձեռնությամբ ձևավորվեց հակահիտլերյան կոալիցիան։ Սովետական զինված ուժերը վճռական դեր կատարեցին ֆաշիստական Գերմանիայի և իմպերիալիստական Ճապոնիայի ջախջախման գործում։ Կատարելով իր ազատագրական առաքելությունը, Կարմիր բանակը օգնեց Եվրոպայի և Ասիայի մի շարք ժողովուրդների՝ ազատագրվելու ստրկացումից։ Բավական է նշել, որ արտասահմանյան երկրների ազատագրման համար մղված ռազմական գործողություններին մասնակցեցին 7 միլիոնից ավելի սովետական ռազմիկներ։ Նրանցից ավելի քան մեկ միլիոնը իրենց կյանքը զոհեցին այդ երկրների ազատագրության համար[9]։ Սովետական ժողովուրդը գործնականում ցույց տվեց իր համերաշխությունը մյուս երկրների աշխատավորների հետ։

Ոմանք կարծում են, թե ՍՍՀՄ միջազգային դերի մասին խոսելիս պետք է նկատի ունենալ միայն Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակի նշանակությունը և մեր երկրի վճռական դերը ֆաշիզմի ջախջախման գործում, թե այժմ, երբ ստեղծվել է սոցիալիզմի համաշխարհային սիստեմը, իբր չի կարելի առանձնացնել որևէ երկիր, թե դա իբր խախտում է սոցիալիստական երկրների իրավահավասարությունը։ Մինչդեռ ՍՍՀՄ-ը այժմ էլ հանդիսանում է սոցիալիզմի համաշխարհային սիստեմի վճռական ուժը, համաշխարհային հեղափոխական պրոցեսի գլխավոր գործոնը։ Սոցիալիզմի համաշխարհային սիստեմը, ամբողջությամբ վերցրած, իհարկե, կարևոր ազդեցություն է ունենում հեղափոխական շարժման վրա։ Սակայն այդ ազդեցությունն ամենից առաջ պայմանավորված է Սովետական Միության, իբրև ամենամեծ և ամենաուժեղ սոցիալիստական պետության, հզորությամբ։ ՍՍՀՄ-ը սոցիալիզմի համաշխարհային սիստեմի միջուկն է, իմպերիալիզմին հակադրվող գլխավոր նյութական և բարոյական ուժը։ Այդ մասին վերստին նշեցին միջազգային կոմունիստական ու բանվորական շարժման ակնառավոր գործիչները ՍՄԿԿ XXVI համագումարում ունեցած ելույթներում։ «Սովետական Միությունը,— ՍՄԿԿ XXVI համագումարում հայտարարեց Յ. Յեդենբալը,— վճռական ներդրում է կատարում համաշխարհային սոցիալիստական ընկերակցության տնտեսական պոտենցիալի զարգացման և նրա պաշտպանունակության ամրապնդման, ընդհանուր խաղաղության պահպանման գործում»[10]։

Սովետական բազմազգ սոցիալիստական պետությունը համաշխարհային զարգացման վրա ազդում է իր գոյության փաստով, ակտիվ արտաքին քաղաքականությամբ, օրինակով, պատմական փորձով։ Միասնական միության մեջ միավորումը բազմապատկեց սովետական բոլոր ժողովուրդների ուժերը, մեծ չափով արագացրեց նրանց սոցիալ-տնտեսական զարգացումը։ Դա, ինչ խոսք, ամրապնդեց համաշխարհային հեղափոխական շարժման բազան և պատվարը հանդիսացող Սովետական Միության դիրքերը։ Դեռևս 1921 թ. վ. Ի. Լենինը նշել է, որ այժմ միջազգային հեղափոխության վրա մենք գլխավոր ներգործությունն անում ենք տնտեսական քաղաքականությամբ։ Դա իր ուժը պահպանել է նաև մեր օրերում։ ՍՍՀՄ տնտեսական և ռազմական հզորությունը, ժողովրդական տնտեսության արագ և կայուն աճը, մեր նվաճումները պայմանավորում են միջազգային ասպարեզում ՍՍՀՄ-ի դերի բարձրացումը, նյութական հիմք են ծառայում նրա ակտիվ արտաքին քաղաքականության համար։ Մեծ Հոկտեմբերի հայրենիքի, հաղթանակած սոցիալիզմի առաջին երկրի հաջողություններն ուղեցույց են սոցիալական և ազգային ազատագրության համար պայքարող երկրների, կապիտալիստական պետությունների աշխատավորների համար։ «Չկա այնպիսի երկիր կամ երկրների խումբ,— ՍՄԿԿ XXVI համագումարում նշեց Լ. Ի. Բրեժնևը,— այնպիսի գաղափարական կամ քա-

---

9 «ՍՄԿԿ պատմություն», Երևան, 1981, էջ 661։

10 «Правда», 26. II. 1981.

ղաքական հոսանք, որն այս կամ այն չափով չկրեր սոցիալիզմի ազդեցությունը։ Այսպիսին է 20-րդ դարի վերջի իրողությունը»[11]։

Վերցնենք, օրինակ, Սովետական Միության և սոցիալիստական ընկերակցության երկրների փոխհարաբերությունները։ Սովետական Միությունը ոչ միայն օգնեց ֆաշիստական ստրկացումից այդ երկրների ազատագրմանը, այլև դրանց պաշտպանեց իմպերիալիստական ինտերվենցիայից։ Մեր երկիրը ժողովրդական դեմոկրատիայի պետություններին տրամադրեց նյութական մեծ օգնություն, հատկացրեց պարեն, ինչպես նաև արդյունաբերության և տրանսպորտի վերականգնման համար անհրաժեշտ շինանյութեր ու սարքավորումներ։ Սովետական Միության և ժողովրդական դեմոկրատիայի երկրների միջև ստորագրվեցին բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության պայմանագրեր, որոնք ամրապնդեցին ժողովրդական իշխանությունն այդ երկներում, դրանց միջազգային դիրքերը։ Սակայն նոր կյանքի առաջին տարիներին Սովետական Միության և ժողովրդական դեմոկրատիայի երկրների տնտեսական կապերը դեռևս թույլ էին։ Հետագայում, քայլ առ քայլ, դրանց միջև հաստատվեցին բազմակողմանի լայն կապեր։ Սոցիալիստական երկրների զարգացումը տեղի է ունենում արագ տեմպերով։ Այդ գործում հրամայական դեր է պատկանում Տնտեսական փոխադարձ օգնության խորհրդին (ՏՓԽ), որը ստեղծվել է 1949 թ.։ Այժմ ՏՓԽ-ի մեջ մտնում են 10 սոցիալիստական երկրներ։ Սոցիալիստական տնտեսական ինտեգրացման հիման վրա բուռն կերպով զարգանում են սոցիալիստական երկրների արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը և կուլտուրան։ Բերենք որոշ փաստեր։ ՏՓԽ-ի անդամ երկրների ազգային եկամուտը 1950 թ. համեմատությամբ 1980 թ. աճել է 8 անգամ, իսկ զարգացած կապիտալիստական երկրներում նույն ժամանակամիջոցում այդ ցուցանիշն ավելացել է 3,2 անգամ։ Սոցիալիստական համագործակցության երկրների արդյունաբերական արտադրանքն այդ տարիներին մեծացել է 12,5, իսկ կապիտալիստական երկրներինը՝ միայն 3,9 անգամ[12]։ Ընդհանուր առմամբ, 30 տարվա ընթացքում, համաշխարհային արդյունաբերական արտադրության մեջ ՏՓԽ-ի անդամ երկրների տեսակարար կշիռն ավելացել է գրեթե 2 անգամ։ Նրանք նոր բնագծեր նվաճեցին 1970-ական թվականներին։ ՏՓԽ-ի անդամ երկրների ազգային եկամուտը 1970 թ. համեմատությամբ 1980 թ. ավելացել է 66, իսկ արդյունաբերության համախառն արտադրանքը՝ 84%-ով[13]։ Այժմ ՏՓԽ-ի անդամ երկրները տալիս են համաշխարհային արդյունաբերական արտադրանքի ավելի քան 40%-ը[14], մինչդեռ զբաղեցնում են երկրագնդի տարածքի միայն 19%-ը և ունեն բնակչության 10%-ը։ Հաջողություններն ակնառու են նաև ՏՓԽ-ի անդամ առանձին երկրներում։

Տնտեսական ինտեգրացումը և համագործակցությունը տանում են դեպի սոցիալիստական երկրների մերձեցում, դրանց էկոնոմիկայի զարգացման մակարդակների ատիճանական հավասարեցում։ Դա կարելի է ցույց տալ Մոնղոլիայի Ժողովրդական Հանրապետության և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության օրինակով։ Այդ երկրները, ինչպես հայտնի է, հանգամանքների բերումով, իրենց տնտեսական զարգացմամբ ետ են մնում սոցիալիստական մյուս երկրներից։ Այժմ խնդիր է դրված ՏՓԽ-ի անդամ երկրների օգնությամբ հաղթահարել դրանց հետամնացությունը, արագացնել դրանց զարգացման տեմպերը։ Այդ գործում, հասկանալի է, մեծ է Սովետական Միության ներդրումը։ Ահա մի քանի փաստեր։ Սովետական Միությունը, որը Մոնղոլիայի Ժողովրդական Հանրապետության հետ համագործակցում է ժողովրդական իշխանության առաջին տարվանից, արդյունավետ օգնություն է ցույց տալիս նրան՝ կարևոր խնդիրները լուծելու գործում։ Վերջին 20 տա-

---

11 «ՍՄԿԿ XXVI համագումարի նյութերը», Երևան, 1981, էջ 131։

12 «Международная жизнь», 1981, № 11, с. 81.

13 «Партийная жизнь», 1982, № 1, с. 74.

14 «Правда», 1. IV. 1982.

ռում Սովետական Միության և եղբայրական մյուս երկրների օգնությամբ Մոնղոլիայում կառուցվել են ավելի քան 160 արդյունաբերական ձեռնարկություն և ժողովրդատնտեսական այլ օբյեկտներ[15], *վերակառուցվել են գրեթե բոլոր գործարաններն ու ֆաբրիկաները, վեր են խոյացել արդյունաբերական նոր կենտրոններ՝ Դարխանը, Չոյբալսանը, Էրդենեթը և այլն։ Բավական է նշել, որ Սովետական Միության օգնությամբ կառուցված ձեռնարկություններն այժմ տալիս են Մոնղոլիայի արդյունաբերության համախառն արտադրանքի 50, էլեկտրաէներգիայի՝ 90 և ածխի՝ 80%-ը*[16]։ *Մոնղոլա-սովետական տնտեսական համագործակցության տարեգրության նշանակալից իրադարձություններից մեկը դարձավ «Էրդենեթ» հանքահարստացուցիչ կոմբինատի կառուցումը։ Այժմ ՄԺՀ-ն զարգացած սոցիալիստական պետություն է, իր բազմաճյուղ էկոնոմիկայով։ Սովետական Միության օգնությամբ այն ֆեոդալիզմից անմիջապես անցել է սոցիալիզմին՝ շրջանցելով զարգացման կապիտալիստական ուղին։ Անցյալ տարի, ինչպես հայտնի է, նշվեց Մոնղոլիայի ժողովրդական հեղափոխության հաղթանակի 60-ամյակը։ Ամփոփելով մոնղոլ ժողովրդի հաջողությունները ժողովրդական իշխանության տարիներին, Յ. Ցեդենբալն ընդգծեց, որ «անցած 60 տարիներին մեր ժողովրդի ձեռք բերած հաջողություններն ու հաղթանակները սերտորեն կապված են սովետական մեծ ժողովրդի մշտական բազմակողմանի օգնության հետ։ Մոնղոլական և սովետական ժողովուրդների բարեկամությունը, որի գլանիտե հիմքերը դրվել են մեծ Լենինի և Սուխե-Բատորի կողմից, մոնղոլ ժողովրդի անգնահատելի նվաճումն է, մեծ ու փոքր ժողովուրդների միջև նոր, սոցիալիստական տիպի հարաբերությունների օրինակ»*[17]։

Ղեկավարվելով պրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքներով, Սովետական Միությունն օգնում է նաև Վիետնամին՝ ժողովրդական տնտեսության շատ ճյուղերի, այդ թվում էլեկտրաէներգիայի, ածխի և քիմիական արդյունաբերության, մեքենաշինության ստեղծման, գիտության ու տեխնիկայի զարգացման գործում։ Մեր երկիրը Վիետնամի Սոցիալիստական Հանրապետությանն օգնում է կառուցելու և վերակառուցելու 268 ժողովրդատնտեսական օբյեկտ։ ՍՍՀՄ-ի օգնությամբ Վիետնամի ժողովրդական տնտեսության համար պատրաստվել է ավելի քան 60 հազար մասնագետ և որակյալ բանվոր[18]։ *Սովետական Միությունը Վիետնամին մատակարարում է զանազան մեքենաներ ու սարքավորումներ, նավթամթերքներ և պարարտանյութեր, լայն սպառման ապրանքներ։ Վիետնամը, իր հերթին, մեր երկրին է ուղարկում գյուղատնտեսական մթերքներ, լեռնային ու թեթև արդյունաբերության արտադրանք և այլ ապրանքներ։ Սովետական Միության անշահախնդիր օգնությունը զգալի ներդրում է Վիետնամում սոցիալիզմի նյութատեխնիկական բազան ստեղծելու գործում։ Վերջերս տեղի ունեցավ Վիետնամի կոմունիստական կուսակցության V համագումարը, որտեղ Լե Զուանը վերստին ընդգծեց, որ վիետնամական հեղափոխության ամեն մի հաղթանակ, Վիետնամի բոլոր նվաճումներն անբաժանելի են Սովետական Միության հետ ունեցած բազմակողմանի համագործակցությունից և ակտիվ օգնությունից*[19]։

Կարելի է բերել Սովետական Միության կողմից սոցիալիստական երկրներին օգնելու նոր փաստեր, նոր օրինակներ։ Բայց բերվածն էլ բավական է համոզվելու համար, որ ՍՍՀՄ-ի գոյությունը, նրա օգնությունը զգալիորեն հեշտացրել են սոցիալիզմի կառուցումը Եվրոպայի, Ասիայի և Լատինական Ամերիկայի մի շարք երկրներում։ ՍՍՀՄ փորձը սոցիալիստական մյուս երկրների կոմունիստական ու բանվորական կուսակցությունների համար ուսանելի է նաև մի այլ առումով։ Այդ փորձը նրանք օգտագործում են իրենց երկրներում

---

15 «Международная жизнь», 1981, № 11, с. 117.

16 *Նույն տեղում, էջ 119։*

17 *Նույն տեղում, էջ 118—119։*

18 «Политическое самообразование», 1980, № 1, с. 91.

19 *«Սովետական Հայաստան», 30. III. 1982։*

ազգային քաղաքականությունն իրագործելիս։ Առաջինը կառուցելով սոցիալիստական հասարակարգ, Սովետական Միությունը եղբայրական երկրներին զինեց սոցիալիստական շինարարության անգնահատելի փորձով։

Համաշխարհային հեղափոխական պրոցեսի կարևոր ջրբաժաններից մեկն ազգային-ազատագրական շարժումն է։ Գաղութային և կախյալ երկրների ժողովուրդները միշտ էլ պայքարել են գաղութարարների դեմ։ Սակայն ուժերն անհավասար էին, և իմպերիալիստական տերությունները կարողանում էին ճնշել այդ պայքարը։ Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակը, ՍՍՀՄ կազմավորումը, սոցիալիզմի կառուցումը Սովետական Միությունում, գերմանական ֆաշիզմի և ճապոնական միլիտարիզմի պարտությունը ու սոցիալիզմի համաշխարհային տիտեմի առաջացումը նպաստավոր պայմաններ ստեղծեցին ժողովուրդների ազատագրական պայքարի ծավալման համար։ Ազգային-ազատագրական հեղափոխությունների հարվածների տակ փլուզվեց իմպերիալիզմի գաղութային սիստեմը։ Բավական է նշել, որ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Ասիայում, Աֆրիկայում և Լատինական Ամերիկայում անկախություն ստացան մոտ 100 պետություններ։ Իհարկե, այդ երկրները շատ տարբեր են։ Մի շարք երկրներում հաստատվել են կապիտալիստական հարաբերություններ, իսկ մի խումբ երկրներ ընտրել են սոցիալիստական զարգացման ուղին։ Այդ երկրներում հաջողությամբ զարգանում է պետական սեկտորը, աստիճանաբար թուլանում են իմպերիալիստական մոնոպոլիաների, տեղական խոշոր բուրժուազիայի և ֆեոդալների դիրքերը, սահմանափակվում է օտարերկրյա կապիտալի գործունեությունը, ամրապնդվում է տնտեսական ինքնուրույնությունը, իրագործվում են առաջադիմական սոցիալական վերափոխություններ, ընդլայնվում են կապերը սոցիալիստական երկրների հետ, այդ երկրները վարում են հակաիմպերիալիստական արտաքին քաղաքականություն։ Բնորոշ է նաև այն, որ դրանցում ամրապնդվում են հեղափոխական կուսակցությունները։ Սոցիալիստական կողմնորոշում ունեցող երկրներն օգտագործում են անցման շրջանի վերաբերյալ լենինյան տեսությունը, ազգային պետական շինարարության փորձը Սովետական Միությունում և այլն։ Զարգացման ոչ կապիտալիստական ուղին ժողովուրդներին ազատում է կապիտալիզմի պատճառած տանջանքներից, ապահովում է սոցիալ-տնտեսական առաջադիմություն։ Այդպիսի ուղու հնարավորության մասին նշել են դեռևս Կ. Մարքսն ու Ֆ. Էնգելսը։ Այդ գաղափարը հետագայում զարգացրել է Վ. Ի. Լենինը։ Նա ցույց է տվել այն պնդումների անհեթեթությունը, թե գաղութատիրությունից ազատագրված երկրները, որոնք նյութական նախադրյալներ չունեն սոցիալիզմին անցնելու համար, պետք է անպայման գնան զարգացման կապիտալիստական ուղով։ «Առաջավոր երկրների պրոլետարիատի օգնությամբ,— գրել է Վ. Ի. Լենինը,— հետամնաց երկրները կարող են անցնել սովետական կարգին և զարգացման որոշ աստիճանների միջոցով՝ կոմունիզմին, խուսափելով զարգացման կապիտալիստական ստադիայից»[20]։ Զարգացման ոչ կապիտալիստական ուղու փորձի գոյությունը Սովետական Միությունում և Մոնղոլիայի Ժողովրդական Հանրապետությունում նպաստավոր գործոն է սոցիալիստական կողմնորոշում ունեցող երկրների համար։ ՍՍՀՄ-ը մի փարոս է հանուն իրենց անկախության պայքարող ժողովուրդների համար։ Սովետական Միության հաջողությունները լուսավորում են ազգային հարցի լուծման ուղին՝ գաղութատիրությունից ազատագրված երկրներում։

Մեր օրերում շատ կարևոր է, որ ամրապնդվի իմպերիալիզմի դեմ հանդես եկող ուժերի միասնությունը։ Նման պայմաններում, ինչ խոսք, մեծանում է պրոլետարական ինտերնացիոնալիզմի նշանակությունը։ «Գործով,— ընդգծել է Վ. Ի. Լենինը,— ինտերնացիոնալիզմը մեկ և միայն մեկ է՝ անձնվեր աշխատանք իր երկրում հեղափոխական շարժումն ու հեղափոխական պայքարը զարգացնելու համար, նույնպիսի պայքարին և նույնպիսի գծին աջակցելու

20 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 31, էջ 295։

համար (պրոպագանդայով, համակրանքով, նյութապես), և միմիայն այդ պայքարին աջակցելու համար առանց բացառության բոլոր երկրներում»[21]։

Ղեկավարվելով պրոլետարական ինտերնացիոնալիզմի լենինյան գաղափարներով, Սովետական Միությունը ու սոցիալիստական մյուս երկրները համակողմանի օգնություն են ցույց տալիս ազատագրված երկրներին և, առաջին հերթին, սոցիալիստական կողմնորոշում ունեցող պետություններին։ Սովետական Միությունն այժմ դիվանագիտական հարաբերություններ ունի Ասիայի, Աֆրիկայի, Լատինական Ամերիկայի 94 երկրների հետ[22]։ Մեր երկիրն ինտերնացիոնալ համերաշխություն է հայտնում բոլոր այն հայրենասերներին, ովքեր ղենքը ձեռքերին պայքարում են դեռևս գոյություն ունեցող գաղութային ռեժիմների դեմ, օգնում է, որ երիտասարդ պետություններում զարգանա պետական սեկտորը, իրագործվեն տնտեսական պլանները, հաղթահարվի հետամնացությունը, ամրապնդվի դրանց անկախությունը։

Սովետական Միությունը տնտեսական և տեխնիկական համագործակցության համաձայնագրեր ունի 56 զարգացող երկրների հետ[23]։ ՍՍՀՄ-ը շահավետ պայմաններով դրանց տրամադրում է երկարատև վարկ, իրագործում է նախագծային և հետախուզական խոշոր աշխատանքներ, կառուցվող ձեռնարկություններին մատակարարում է սարքավորումներ և նյութեր։ Բավական է նշել, որ ՏՓԽ-ի անդամ երկրների աջակցությամբ և օգնությամբ Ասիայի, Աֆրիկայի ու Լատինական Ամերիկայի երկրներում կառուցվել և կառուցվում են ավելի քան 4400 ձեռնարկություն և զանազան օբյեկտներ[24], այդ թվում՝ մոտ 1000-ը՝ Սովետական Միության կողմից։ Դրանք սև և գունավոր մետալուրգիայի, մեքենաշինական, քիմիական, նավթաքիմիական ձեռնարկություններ են, էլեկտրակայաններ և այլն։

Վերջին տարիներին ավարտված օբյեկտներից նշենք, օրինակ, Ասվանի հիդրոէներգետիկ կոմպլեքսը Սիրիայում, որը տալիս է երկրում արտադրվող էլեկտրաէներգիայի ավելի քան 70%-ը, մետալուրգիական գործարանի երկրորդ հերթը Ալժիրում, որը նրա կարողությունը հասցրել է 2 մլն տ պողպատի, 2,5 մլն տ բոքսիտների հանույթ ապահովող ձեռնարկությունը Գվինեայում և այլն[25]։

Միայն Աֆրիկայի երիտասարդ պետություններում Սովետական Միության օգնությամբ կառուցվում է մոտ 500 օբյեկտ, որից ավելի քան 200-ը արդյունաբերական ձեռնարկություններ են։ Արդեն կառուցվել և շահագործման է հանձնվել մոտ 300 օբյեկտ, այդ թվում 100-ից ավելի արդյունաբերական ձեռնարկություններ[26]։ Մեր երկիրն ազատագրված շատ երկրների աջակցում է նաև կադրերի՝ ինժեներների, տեխնիկների, որակյալ բանվորների, բժիշկների, ուսուցիչների պատրաստման գործում։ Սովետական Միության ուսումնական հաստատություններում կրթություն են ստացել կամ իրենց որակավորումն են բարձրացրել մոտ 25 մլն արտասահմանյան քաղաքացիներ, որի կեսը ազատագրված երկրների քաղաքացիներ են[27]։ Միայն Աֆրիկայի ազատագրված երկրներում Սովետական Միության օգնությամբ հիմնադրվել է 130 ուսումնական հաստատություն[28]։ Ասիայի և Աֆրիկայի երկրների շինարարական հրապարակներում, արդյունաբերության և գյուղատնտեսության մեջ, հիվանդանոցներում և ուսումնական հաստատություններում անձնվիրաբար աշխատում են տասնյակ հազարավոր սովետական մասնագետներ։

---

21 Վ. Ի. Լենին, երկ, հ. 31, էջ 206։

22 «Политическое самообразование», 1980, № 1, с. 46.

23 Նույն տեղում, էջ 49։

24 «История КПСС», 1980, № 7, с. 74.

25 «ՍՄԿԿ XXVI համագումարի նյութերը», էջ 18։

26 «Международная жизнь», 1982, № 1, с. 37.

27 «Вопросы истории КПСС», 1982, № 1, с. 27.

28 «Международная жизнь», 1982, № 1, с. 37.

ՍՍՀՄ-ը եղբայրական մյուս երկրների հետ մեկտեղ աջակցում է նաև ազատագրված պետությունների պաշտպանունակության ամրապնդմանը, ցույց է տալիս ռազմական օգնություն, եթե դրանք դիմում են այդպիսի խնդրանքով։ Դա եղավ, օրինակ Անգոլայում, Եթովպիայում, Աֆղանստանում, երբ այդ երկրների ժողովրդական հեղափոխությունները վտանգի մեջ էին։ ՍՄԿԿ XXVI համագումարը վերստին ընդգծեց, որ ՍՍՀՄ-ը այսուհետև էլ համակողմանի օգնություն ցույց կտա Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի երիտասարդ պետություններին։ Համագումարը խնդիր դրեց 11-րդ հնգամյակում երկարաժամկետ և իրավահավասար հիմքի վրա զարգացնել Սովետական Միության և զարգացող երկրների փոխշահավետ ապրանքափոխանակությունը, տնտեսական, գիտատեխնիկական համակողմանի կապերը, շարունակել տնտեսական ու տեխնիկական աջակցությունն այդ երկրներին՝ արդյունաբերական, գյուղատնտեսական, էներգետիկ և այլ օբյեկտների կառուցման գործում, որոնք նպաստում են դրանց տնտեսական ու քաղաքական անկախության ամրապնդմանը[29]։

ՍՍՀՄ քաղաքական, տնտեսական և կուլտուրական համագործակցությունը Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի երիտասարդ պետությունների հետ նպաստում է խաղաղության ու այդ երկրների առաջադիմության գործին։

Մեր օրերում, երբ իմպերիալիզմի և ամենից առաջ ամերիկյան իմպերիալիզմի քաղաքականության պատճառով միջազգային իրադրությունը խիստ սրվել է, մարդկության բախտի համար առաջնակարգ նշանակություն ունի մեր կուսակցության ու պետության խաղաղության լենինյան ստրատեգիայի ակտիվ կենսագործումը։ ՍՍՀՄ արտաքին քաղաքականությունը, հասկանալի է, ամենից առաջ նպատակամղված է այն բանին, որ միջազգային բարենպաստ պայմաններ ապահովվի կոմունիզմի կառուցման, սովետական ժողովրդի առջև ծառացած ստեղծարար խնդիրների լուծման համար։ Դրա հետ միասին Սովետական Միությունն արտաքին քաղաքականության գլխավոր խնդիրներից մեկն էլ նպաստելն է սոցիալիզմի համաշխարհային սիստեմի դիրքերի ամրապնդմանը, աղգային ազատագրության և սոցիալական առաջադիմության համար ժողովուրդների պայքարի զարգացմանը։ Այս առումով ևս մեր արտաքին քաղաքականությունը միջազգային նշանակություն ունի, կրում է ինտերնացիոնալիստական բնույթ։ Հանձին Սովետական Միության աշխարհի ժողովուրդները տեսնում են պատերազմի հրձիգների ճանապարհին գլխավոր խոչընդոտին, խաղաղության կարևոր հենարանին. Ամրապնդելով խաղաղությունը, «դրանով մենք լուծում ենք նաև հիրավի համաշխարհային բնույթի պրոբլեմ։ Քանի որ ոչ մի ժողովրդի համար չկա ավելի էական, ավելի կարևոր հարց, քան խաղաղության պահպանումը, քան յուրաքանչյուր մարդու առաջնագույն իրավունքի՝ ապրելու իրավունքի ապահովումը»[30]։ Ի հակադրություն իմպերիալիզմի, որը սրում է միջազգային իրադրությունը, ՍՄԿԿ XXVI համագումարը, զարգացնելով XXIV և XXV համագումարների դիծը, առաջադրեց 1980-ական թվականների խաղաղության ծրագիրը։ Այդ ծրագիրը հիմնականում հանգում է հետևյալին. մարել դեռևս գոյություն ունեցող ռազմական կոնֆլիկտների օջախները և քաղաքական հուսալի երաշխիքներ ստեղծել, որպեսզի այլևս երևան չգան նման օջախներ, իրական քայլ կատարել սպառազինությունների մրցավազքը սահմանափակելու, իսկ հետագայում՝ նաև այն կրճատելու գործում, վերականգնել ու խորացնել երկխոսությունն Արևմուտքի հետ։ ՍՄԿԿ XXVI համագումարից հետո Սովետական Միությունը հանդես եկավ նոր առաջարկություններով. մասնավորապես Սովետական Միությունը որոշում է ընդունել միակողմանիորեն դադարեցնել ՍՍՀՄ Եվրոպական մասում միջին հեռավորության միջուկային սպառազինությունների ծավալումը և

29 «ՍՄԿԿ XXVI համագումարի նյութերը», էջ 315—316։

30 Նույն տեղում, էջ 6։

նույնիսկ կատարելու այդ կարգի արդեն եղած հրթիռների որոշակի կրճատում։ «Մենք,— Տաշքենդում ունեցած ելույթում ասաց Լ. Ի. Բրեժնևը,— ասել ենք մեր խոսքը՝ բանականության ու խաղաղասիրության խոսքը, որը հավանությամբ ընդունվեց ամբողջ աշխարհում։ Հիմա խոսքը պատկանում է Արևմուտքին»[31]։ Սովետական պետության քաղաքականությունը խորապես մարդասիրական է, կրում է անկեղծ, դեմոկրատական բնույթ, համապատասխանում է ՍՍՀՄ-ի, եղբայրական սոցիալիստական երկրների ժողովուրդների, միջազգային բանվոր դասակարգի, ամբողջ խաղաղասեր մարդկության շահերին։ Կուսակցության XXVI համագումարը վերստին հայտարարեց, որ միջազգային տեսակետից մեր կուսակցության, մեր ժողովրդի համար չկա ավելի կարևոր խնդիր, քան խաղաղության պահպանումը։

ՍՍՀՄ-ը հուսալի պատվար է նաև միջազգային կոմունիստական շարժման համար, շարժում, որը դարձել է արդիականության ազդեցիկ քաղաքական ուժը։ Բավական է նշել, որ այժմ աշխարհի 94 երկրներում ակտիվորեն գործում են կոմունիստական ու բանվորական կուսակցություններ, որոնք իրենց շարքերում ունեն ավելի քան 70 միլիոն մարդ[32]։ Դա, ինչ խոսք, մեծ ուժ է։ Միմիայն Արևմտյան Եվրոպայում վերջին տասը տարում նրանց շարքերն են համալրել մոտավորապես 800 հազար նոր մարտիկներ[33]։ Դա վկայում է կոմունիստական գաղափարների անհաղթահարելի ձգողական ուժի մասին։ ՍՄԿԿ-ն լավ հարաբերություններ ունի կոմունիստական կուսակցությունների հսկայական մեծամասնության հետ և հետևողականորեն հանդես է գալիս միջազգային կոմունիստական շարժման միասնության ամրապնդման օգտին։ Ինչպես նշված է «ՍՍՀՄ կազմավորման 60-րդ տարեդարձի մասին» ՍՄԿԿ Կենտկոմի որոշման մեջ, «Սովետական Միությունը ոչ որի չի պարտադրում կառուցվածքի որևէ շաբլոն և «մոդել», որոնք անտեսեին այս կամ այն երկրի առանձնահատկությունները։ Նա պատմության ընթացքի վրա հարաճուն ազդեցություն է գործում իր գոյության բուն փաստով, նոր տիպի սոցիալական, ազգամիջյան հարաբերությունների ռեալ պրակտիկայով, բարդ պրոբլեմների լուծման օրինակի ուժով, որոնցից ի վիճակի չէ գլուխ հանել կապիտալիզմը։ ՍՍՀՄ-ը, որպես հզոր սոցիալիստական պետություն, մյուս երկրների հետ իր հարաբերությունները կառուցում է հավասարության վրա, Վ. Ի. Լենինի խոսքերով ասած, մարդկային սկզբունքով, այլ ոչ թե մեծ ժողովրդին ստորացնող արտոնությունների սկզբունքով»[34]։

МЕЖДУНАРОДНОЕ ЗНАЧЕНИЕ ОБРАЗОВАНИЯ СССР

ГРИГОР АЙВАЗЯН

Резюме

Образование Союза ССР — результат победы Великой Октябрьской социалистической революции, живое воплощение идей В. И. Ленина, ленинских принципов национальной политики Коммунистической партии. Образование СССР, установление отношений дружбы и взаимопомощи между советскими народами придало гигантское ускорение экономическому и социальному развитию социалистического общества.

Образование и успешное развитие СССР имеют непреходящее международное значение. Советский Союз оказывает растущее влияние на ход мировой истории самим фактом своего существования, своим примером в решении важнейших проблем, своей активной внешней политикой.

31 «Սովետական Հայաստան», 25. III. 1982։

32 «Политическое самообразование», 1980, № 1, с. 65.

33 «ՍՄԿԿ XXVI համագումարի նյութերը», էջ 24։

34 «Սովետական Հայաստան», 21. II. 1982։